DOI: 10.54503/1829-4324.2024.1-52

ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Վարդուհի Արեգի Խաչատուրյան
Էլինա Սերգեի Շամխալովա

Հոդվածը ստացվել է՝ 14.02.24, ուղարկվել է գրախոսման՝ 17.04.24, երաշխավորվել է տպագրության՝ 06.06.24

Ներածություն: Բարենպաստ գործարար միջավայրը տնտեսության հիմնական շարժիչ ուժն է: Ընդհանուր առմամբ, այն կախված է արտաքին ու ներքին միջավայրերի գործոններից, որոնց ազդեցությամբ գործում է բիզնեսը:

Գործարար միջավայրի զարգացումը հնարավորություն է ընձեռում մեղմելու տնտեսական և սոցիալական դժվարությունները, նպաստում երկրի կյանքի որակի բարձրացմանը: Այս և նմանատիպ հիմնախնդիրների լուծումները **արդիական են դարձնում հետազոտության** թեման:

Հոդվածի **նպատակն** է ուսումնասիրել և բացահայտել գործարար միջավայրի զարգացման միտումները աշխարհում, ՀՀ-ն այդ համատեքստում:

Գրականության վերլուծություն

Թեմային անդրադարձել են բազմաթիվ հեղինակներ, աշխատությունների հիմքում դնելով ինչպես տեսական, այնպես էլ գործնական ուսումնասիրություններ և վերլուծություններ գործարար միջավայրի վերաբերյալ, սակայն հիմնականում չեն դիտարկվել գործարար միջավայրի բարելավման երկարաժամկետ ռազմավարություն, որը թույլ կտա գործարարությամբ զբաղվողներին ընթացակարգերը առավելագույնս թվայնացնել, շահագրգիռ բոլոր կողմերի հետ արդյունավետ հաղորդակցվել և հետադարձ կապ ունենալ:

Գործարար միջավայրի հիմնախնդիրը իր արծարծումներն է ստացել հայ տնտեսագետների հետազոտություններում ցույց տալով մակրոտնտեսական գործոնների ազդեցությունը ՀՀ գործարար միջավայրի վրա: Առաջարկվել են համապատասխան ընթացակարգեր, որոնց կիրառումը կարող է բարձրացնել գործարար ակտիվությունը ՀՀ իրական հատվածում և ոչ միայն: Այդ կարգի հետազոտություններ է Ա.Մանասյանի[1], Ա. Մարկոսյանի[2], Ս. Դավոյանի[3] , Պ. Քալանթարյանի[4] և այլ հեղինակների աշխատություններ:

Օտարերկրյա հեղինակների աշխատություններում նույնպես հիմնարար հետազոտություններ կան ուղղված գործարար միջավայրին: Ըստ Ֆիլ Քելիի գործարար միջավայրը բոլոր պայմանների, իրադարձությունների ամբողջությունն է,

---

[1] Մանասյան Ա., ՀՀ գործարար միջավայրի մրցակցային ռազմավարության նոր մոդել, http://arar.sci.am/Content/39135

[2] Մարկոսյան Ա., «Պետությունը և շուկան», Երևան, «Տիգրան Մեծ», 2000, 560 էջ:

[3] Դավոյան Ս., Մարկոսյան Ա., Սարգսյան Հ., «Վերափոխումներն անցումային երկրների տնտեսություններում», Երևան, «Տիգրան Մեծ» 2003:

[4] Քալանթարյան Պ., «Գործարարության գործավարություն, Երևան «Տնտեսագետ» 2005:

որոնք շրջապատում և ազդում են վերջինիս վրա[1]: Դ. Դոլարի համաձայն գործարար միջավայրը ինստիտուցիոնալ, քաղաքական և կարգավորող պայմաններն են, որոնց շրջանակներում գործում է առևտրային կազմակերպությունը[2]:

Հարվարդի համալսարանի պրոֆեսոր, հայտնի բիզնես խորհրդատու Մայքլ Փորթերը առանձնացրեց հինգ կարևոր արտաքին գործոններ («Պորտերի հինգ ուժերը» (Porter's Five Forces), որոնք ազդում են ցանկացած արդյունաբերական կազմակերպությունների կողմից մշակվող ռազմավարությունների վրա: Որպես ռազմավարական կառավարման կարևոր գործիք: Ղեկավարներն օգտագործում են գործիքը՝ հնարավորություններն ու սպառնալիքները քննելու և որոշումներ կայացնելը հեշտացնելու համար՝ իրենց ընկերության արտաքին միջավայրի համատեքստում: Այն չափում է ոլորտի մրցունակությունը և, այդպիսով, նրա գրավչությունը կամ հավանական շահութաբերությունը [3]:

Մեթոդաբանություն: Հոդվածի համար տեսական և մեթոդական հիմք են հանդիսացել արտասահմանյան և հայ գիտնականների, հետազոտողների աշխատությունները, Համաշխարհային բանկի, միջազգային արժույթի հիմնադրամի, BERI միջազգային կազմակերպության, ՏՀԶԿ-ի կողմից հրապարակված զեկույցներն ու պաշտոնական վիճակագրությունը, և այլ զեկույցներ:

Վերլուծություն: Այսօր Համաշխարհային տնտեսության տարբեր երկրների ու ոլորտների համաթվերի մասին կարող ենք բավարար տեղեկություն իմանալ Համաշխարհային բանկի, արժույթի միջազգային հիմնադրամի, ՏՀԶԿ-ի կողմից հրապարակված զեկույցների ու պաշտոնական վիճակագրության, միջազգային նշանավոր ֆինանսական, տնտեսական կազմակերպությունների կողմից հրապարակվող զեկույցներից: Նշված հաշվետվություններն ու զեկույցները թույլ են տալիս գնահատել մրցունակության, տնտեսական ազատության, գործարար միջավայրի դյուրինության և զարգացման միտումները աշխարհում և դիտարկել Հայաստանը այդ համատեքստում:

Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից հրապարակվող ամենամյա՝ «Համաշխարհային մրցունակության զեկույցը» (ՀՄԶ) տրամադրում է երկրների մրցակցային ներուժը բնութագրող մանրակրկիտ գնահատականներ[4]:

Համաշխարհային մրցունակության կենտրոնի կողմից 35-րդ տարին անընդմեջ տարեկան զեկույցով հանդես է գալիս IMD World Competitiveness Yearbook (WCY)-ը[5], որն առաջին անգամ հրատարակվել է 1989 թվականին: Այն տրամա-

---

[1] Phil Kelly and Andrew Ashwin «The Business Environment», 2013, pp. 78-81

[2] 1 Dollar D., Hallwart-Driemier M., Mengistae T., « Investement Climate and Firms Performance in the Developmenet Economies». World Bank, 2003 pp. 118-120.

[3] Michael E. Porter. «The Five Competitive Forces that Shape Strategy», Harvard Business Review, January, 2008, p.86.

[4] IMD (2023), IMD World Competitiveness Booklet, Lausanne, Switzerland: IMD, retrieved from: https://imd.cld.bz/IMD-World-Competitiveness-Booklet-2023. Date of access February 14, 2024.

[5] IMD (2023), IMD World Competitiveness Booklet, Lausanne, Switzerland: IMD, retrieved from: https://imd.cld.bz/IMD-World-Competitiveness-Booklet-2023. Date of access February 14, 2024.

դրում է չափորոշիչներ և միտումներ, ինչպես նաև վիճակագրություն և վերլուծություններ՝ հիմնված լայնածավալ հետազոտությունների վրա:

IMD World Competitiveness Ranking-ի 2023թ զեկույցը[1] լուսաբանում է 64 տնտեսություններին (ներառված չեն Ռուսաստանի, Ուկրաինայի և Հայաստանի տնտեսությունների մրցունակության վարկանիշները): Ըստ զեկույցի Դանիան, Իռլանդիան և Շվեյցարիան ճանաչվել են լավագույն եռյակը 64 տնտեսությունների շարքում, որոնք գնահատվել են իրենց գլոբալ մրցունակությամբ: Դանիան պահպանել է իր գրված առաջին տեղը անցյալ տարվա համեմատ, Իռլանդիան 11-րդ տեղից ուշագրավ թռիչք է կատարել և զբաղեցրել երկրորդ տեղը, իսկ Շվեյցարիան պահպանել է իր երրորդ տեղը՝ 2022 թվականին երկրորդ տեղից իջնելուց հետո: Ինչպես նկատում ենք երեքն էլ փոքր տնտեսություններ են, որոնք ունեն զարգացած շուկաներ և առևտրային գործընկերներ, ինչպես և Սինգապուրը, որը չորրորդն է: Դանիայի առաջատար դիրքը հիմնված է նրա շարունակական նվաճումների վրա՝ չափված մրցունակության բոլոր չորս գործոններով: Այն մնում է առաջինը բիզնեսի արդյունավետության և երկրորդը ենթակառուցվածքների առումով, և ցույց է տալիս կառավարության արդյունավետության մի փոքր բարելավված արդյունքներ՝ վեցերորդից հինգերորդը դառնալով: Վարկանիշում չափվող մեկ այլ գործոն տնտեսական ցուցանիշն է: Իռլանդիայի կտրուկ աճը մեծապես այս գործոնում նրա աստղային կատարողականի արդյունքն է, որտեղ այն յոթերորդից բարձրացել է առաջինը: Շվեյցարիան պահպանում է երրորդ տեղը՝ շնորհիվ չափված մրցունակության բոլոր գործոնների իր ուժեղ կատարողականի: Այն մնում է առաջինը կառավարության արդյունավետության և ենթակառուցվածքների առումով, զբաղեցնում է յոթերորդ տեղը բիզնեսի արդյունավետությամբ (անկում չորրորդից) և բարելավում է տնտեսական ցուցանիշները: Աշխարհաքաղաքական լարվածության ազդեցությունը զգալի է Ռուսաստանի և Ուկրաինայի վրա տնտեսական տեսանկյունից:

Վերը նշված առաջատար հորիզոնականներ զբաղեցնող երկրներից գալիս ենք այն եզրահանգման, որ այսօր ունենք անկանխատեսելի միջավայր, որը պահանջում է շարժունություն, հարմարվողականություն և տնտեսության ճկունություն: ՀՀ տնտեսական պայմանները ենթադրում են, որ կառավարությունը կարող է իր քաղաքականությունը հարմարեցնել ժամանակին: Առաջատար դիրք ունեցող երկրները առաջնորդվում են տնտեսության ճկունությամբ, ինչպիսիք են Իռլանդիան, Իսլանդիան և Բահրեյնը:

Ամերիկյան “The Heritage Foundation” հետազոտական կենտրոնը և “The Wall Street Journal” թերթը ամեն տարի հրապարակում են աշխարհի երկրների վարկանիշը՝ իրենց քաղաքացիների տնտեսական ազատության մակարդակով (“Index of Economic Freedom”): “The Heritage Foundation”-ի փորձագետները տնտեսական ազատությունը սահմանում են որպես «պետական միջամտության բացակայու-

[1] IMD, World Competitiveness Ranking 2023 - IMD Business School https://www.imd.org/centers/wcc/world-competitiveness-center/rankings/world-competitiveness-ranking/

թյուն կամ խոչընդոտում ապրանքների և ծառայությունների արտադրությանը, բաշխմանը և սպառմանը՝ բացառությամբ քաղաքացիներին որպես այդպիսին անհրաժեշտ ազատության պաշտպանության և աջակցության»[1]: Երկրների վարկանիշի վերջին տարբերակը, ըստ տնտեսական ազատության մակարդակի, հրապարակվել է «Տնտեսական ազատության ինդեքս 2023» զեկույցում, որտեղ ուսումնասիրվում են 176 երկիր[2]:

Համաձայն զեկույցի՝ տնտեսական ազատության համաշխարհային ինդեքսը նախորդ ժամանակահատվածի համեմատ վատթարացել է 0.7 միավորով և 100 հնարավորից կազմում է 59.3 միավոր, ինչը վերջին երկու տասնամյակի նվազագույն արժեքն է[3]:



Գծապատկեր 1. **ՀՀ տնտեսական ազատության ինդեքսը 2010-2023թթ[4]**

Հայաստանում տնտեսական ազատության ինդեքսը նույնպես անկում ունի, ինչը հիմնականում պայմանավորված է աշխարհաքաղաքական գործողություններով, չնայած այդ հանգամանքին 2020 և 2021 թթ-ին Հայաստանը տնտեսապես «հիմնականում ազատ» երկրների խմբում էր: Սկսած 2022թ-ից Հայաստանը տնտեսապես «չափավոր ազատ» երկրների խմբում է, ինչը վերջին տասնամյակի

[1] Լույս հիմնադրամ, Հաշվետվություն «Հերիթեյջ» հիմնադրամի կողմից հրապարակված զեկույցի (2023թ.)հիմանվրա,https://www.luys.am/img/artpic/small/08f109c250865259fd1104_%D5%8F%D4%B1%D4%BB-2023.pdf,

[2] Լույս հիմնադրամ, Հաշվետվություն «Հերիթեյջ» հիմնադրամի կողմից հրապարակված զեկույցի (2023թ.)հիմանվրա,https://www.luys.am/img/artpic/small/08f109c250865259fd1104_%D5%8F%D4%B1%D4%BB-2023.pdf,

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Լույս հիմնադրամ, (2023թ.), Հաշվետվություն, «Հերիթեյջ» հիմնադրամի կողմից հրապարակված զեկույցի հիման վրա, ՀՀ տնտեսական ազատության ինդեքս - 2023 https://www.luys.am/img/artpic/small/08f109c250865259fd1104_%D5%8F%D4%B1%D4%BB-2023.pdf

ընթացքում ամենացածր տնտեսական ազատության ինդեքսն է: Ըստ զեկույցի՝ Հայաստանը զբաղեցրել է 50-րդ հորիզոնականը՝ 65.1 միավորով՝ նախորդ տարվա 65.3 միավորի (58-րդ հորիզոնական) համեմատ: Հատկանշական է, որ 2023թ.-ին ՀՀ-ի զբաղեցրած դիրքը բարելավվել է, սակայն միավորները 2022թ.-ի համեմատ նվազել են 0.2-ով[1]:

Հարկ է նշել, որ ցանկացած երկրում տնտեսական զարգացմանը խոչընդոտող լրջագույն հիմնախնդիր է կոռուպցիան, իսկ տնտեսական ազատությունը ամրացնելու միջոցը դատական համակարգն է: Թե ինչքանով է Հայաստանում տնտեսական ազատության հիմքերի ամրությունը պահպանվում դատական համակարգի կողմից՝ խնդրահարույց է: Ներկայացվող վերլուծության հիման վրա կարող ենք եզրակացնել, որ նվազել է՝

- դրամավարկային ազատության ենթաինդեքսը (7.0 միավորով), (որի պատճառը չնայած պետության միջամտությանը՝ գների բարձր մակարդակն է),
- հարկաբյուջետային կայունությունը, (պատճառը թերևս այն է, որ պարտքային միջոցները բյուջետային ընթացիկ ծախսերի տեսքով են և ոչ թե հանրային ներդրումների),
- պետական ծախսերը:

ԵԱՏՄ երկրների շարքում տնտեսական ազատության ինդեքսով Հայաստանը առաջատարն է իր դիրքով և միավորով: ԵԱՏՄ մյուս երկրների դասակարգումն ունի հետևյալ պատկերը

- Ղազախստանը 62,1 միավոր (71-րդ),
- Ղրղզստանը 55.8 միավոր (115-րդ),
- Ռուսաստանը 53.8 միավոր (125-րդ),
- Բելառուսը 51 միավոր (145-րդ)[2]:

Կոռուպցիայի մակարդակի ուսումնասիրությունը կարևոր է գործարար միջավայրի բարելավման և զարգացման տեսանկյունից, տնտեսական իրավիճակի, ազատ մրցակցային պայմանների վերաբերյալ պատկերացում կազմելու համար: Կոռուպցիայի մակարդակը չափվում է «Թրանսպարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի կողմից 1995թ.-ից ի վեր հրապարակվող «Կոռուպցիայի ընկալման ինդեքս» (ԿԸՀ) ամենամյա զեկույցների շարքում[3]:

---

[1] Լույս հիմնադրամ, (2023թ.), Հաշվետվություն, «Հերիթեյջ» հիմնադրամի կողմից հրապարակված զեկույցի հիման վրա, ՀՀ տնտեսական ազատության ինդեքս - 2023 https://www.luys.am/img/artpic/small/08f109c250865259fd1104_%D5%8F%D4%B1%D4%BB-2023.pdf

[2] Լույս հիմնադրամ, Հաշվետվություն, Տնտեսական Ազատության Ինդեքս «Հերիթեյջ» հիմնադրամի կողմից հրապարակված՝ 2020թ. զեկույցի հիման վրա: https://www.luys.am/img/artpic/small/4731163877d98bf58d05%D5%8F%D5%86%D5%8F%D4%B5%D5%8D%D4%B1%D4%BF%D4%B1%D5%86%D4%B1%D4%B6%D4%B1%D5%8F%D5%88%D5%92%D4%B9%D5%85%D4%B1%D5%86%D4%BB%D5%86%D4%B4%D4%B5%D5%94%D5%8D.pdf

[3] Թրանսպարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, (2023թ.), Կոռուպցիայի ընկալման համաթիվ (ԿԸՀ), https://transparency.am/hy/cpi



	Հայաստան	Ղազախստան	Ռուսաստան	Ղրղզստան	Բելառուս
2015	52	69	143	82	153
2016	54	68	153	96	157
2017	33	42	114	89	104
2018	44	41	107	78	108
2019	47	59	98	79	104
2020	34	39	94	81	88
2021	32	34	92	78	95
2022	58	64	113	116	135
2023	50	71	125	115	145

Գծապատկեր 3. **ԵԱՏՄ երկրների դիրքի շարժընթացը տնտեսական ազատության ինդեքսով 2015-2023թթ** [1]

«Կոռուպցիայի ընկալման ինդեքս» 2023թ-ի զեկույցում հակակոռուպցիոն կենտրոնի կողմից ուսումնասիրվել են 180 երկներ և տարածքներ՝ ըստ հանրային ոլորտում կոռուպցիայի ընկալման մակարդակի՝ 0-ից (բացարձակապես կոռումպացված) մինչև 100 (բացարձակապես մաքուր) սանդղակով[2]: Զեկույցի համաձայն առկա է հետևյալ պատկերը՝

Հայաստան-47 միավոր, Մոլդովա-42 միավոր, Կոսովոն-41 միավոր, Ուկրաինան- 36 միավոր, Ուզբեկստան- 33 միավոր: Այս երկրները զգալիորեն բարելավել են իրենց կոռուպցիայի ընդհանուր համաթվերը վերջին տասը տարիների ընթացքում: Անկում են գրանցվել հետևյալ երկրների մոտ՝ Բոսնիա և Հերցեգովինա - 35 միավոր, Թուրքիա- 34 միավոր, Թուրքմենստան - 18 միավոր, Թուրքիան և Սերբիան -36 միավոր, Ռուսաստան-26 միավոր և Տաջիկստանը -20 միավոր: Ամենացածր ԿՀՀ միավորներն ունեն Ադրբեջանը -23 միավոր, Տաջիկստանը -20 միավոր և Թուրքմենստանը -18 միավոր[3]: Ինչպես նախորդ երեք տարիներին, 2022թ.-ին ևս Հայաստանի ԿՀՀ-ն ավելի բարձր է եղել համաշխարհային միջին արժեքից (43 միավոր): Հատկանշական է նաև, որ Հայաստանն իր դիրքը զիջել է 5 հորիզոնականով՝ 2022թ.-ին զբաղեցնելով 63-րդ հորիզոնականը (տե՛ս գծապատկեր 4): Թրանսփարենսի Ինթերնեշնլ-ի 2023 թվականի կոռուպցիայի ընկալման

[1] Լույս հիմնադրամ, (2023թ.), Հաշվետվություն, «Հերիթեյջ» հիմնադրամի կողմից հրապարակված զեկույցի հիման վրա, ՀՀ տնտեսական ազատության ինդեքս - 2023 https://www.luys.am/img/artpic/small/08f109c250865259fd1104_%D5%8F%D4%B1%D4%BB-2023.pdf

[2] Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, (2023թ.), Կոռուպցիայի ընկալման համաթիվ (ԿՀՀ), https://transparency.am/hy/cpi

[3] Տե՛ս նույն տեղում:

ինդեքսում Հայաստանը 100 միավորից վաստակել է 47 միավոր: Հայաստանում կոռուպցիայի ինդեքսը 1999-ից մինչև 2023 թվականը միջինը կազմել է 34,13 միավոր՝ հասնելով պատմության ամենաբարձր ցուցանիշին՝ 2020 թվականին՝ 49,00 միավոր, իսկ 2000 թվականին՝ ռեկորդային ցածր՝ 25,00 միավոր:



Գծապատկեր 4. **«Կոռուպցիայի ընկալման ինդեքս» 2023թ.**[1]

Միջազգային վարկանիշային ինդեքսներից երկուսում՝ տնտեսական և կոռուպցիայի ընկալման, Հայաստանը միավորներով հետընթաց է գրանցել, իսկ առաջին երկուսում դիրքի բարելավում:

Ըստ Եվրոպական հանձնաժողովի EU4Business[2] 2022թ-ի տարեկան զեկույցի՝ Արևելյան գործընկերության (ԱլԳ) վեց երկրների ՓՄՁ-ներին 2021 թվականին ԵՄ-ն հատկացրել է 140 միլիոն եվրո՝ աջակցելու ընդհանուր առմամբ շուրջ 78,000 ՓՄՁ-ների, որոնցից յուրաքանչյուր երրորդը պատկանում է կանանց: Որպես արդյունք՝ Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում ԵՄ-ի կողմից աջակցվող ՓՄՁ-ներին հաջողվել է ստեղծել ավելի քան 66,000 նոր աշխատատեղ և ստանալ 2 միլիարդ եվրոյի հավելյալ եկամուտ: ՀՀ–ում անհրաժեշտ է բարեփոխումներ իրականացնել ՓՄՁ–ների հարկման դաշտում և տնտեսական քաղաքականության գործիքակազմի կառուցվածքում, քանի որ ՓՄՁ–ների զարգացումն ինքնին ապահովում է սոցիալական նշանակություն ունեցող խնդիրների լուծում, ինչպիսիք են՝ քաղաքացիների զբաղվածությունը, ինքնազբաղվածությունը, ընտանեկան բիզնեսը:

Համաշխարհային բանկը հրապարակում է «գործարարության վարման դյուրինության» ինդեքսը, որը հաշվի է առնում մի շարք փոփոխականներ՝ թույլտվություններ ստանալու համար պահանջվող ժամանակը, ներդրողների իրա-

---

[1] Թրանսպարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, (2023թ.), Կոռուպցիայի ընկալման համաթիվ (ԿԸՀ), https://transparency.am/hy/cpi

[2] EU NEIGHBOURSEAST :(October 21, 2022) ,The EU has published EU4Business 2022. annual report on SME support in Eastern Partnership countries, , retrieved from: https://euneighbourseast.eu/hy/news/latest-news/em-n-hraparakel-e-eu4business%D6%8Ai-2022t-tarekan-zekuycy-arewelyan-gorcynkerutyan-erkrnerum-pmj-ajakcutyan-masin/

վական պաշտպանությունը և անդրսահմանային առևտրի դյուրինությունը, ինչպես նաև այլ գործոններ: Ամեն տարի Համաշխարհային բանկն իր վերահսկողության տակ գտնվող 190 երկրներից յուրաքանչյուրին շնորհում է բիզնեսի համար բարենպաստ վարկանիշ և հրապարակում է ինդեքսը: 2013թ.-ին նոր տարեկան վարկանիշային աղյուսակի հրապարակումից ի վեր, տեղի է ունեցել զգալի դրական դինամիկա որոշ զարգացող երկրների վարկանիշներում, որտեղ վերջին տասնամյակում բիզնեսով զբաղվելը կայունորեն հեշտացել է: 2023թ.-ի Համաշխարհային բանկի տվյալներով առավել դյուրին գործարար միջավայր ունեն ներքոհիշյալ պետությունները:

Վրաստանը երկար ճանապարհ է անցել 1991 թվականին ԽՍՀՄ-ից անկախանալուց հետո: Համաշխարհային բանկի տվյալներով՝ գլոբալ ազատ շուկայական տնտեսության մեջ ընդամենը երկու տասնամյակ ներկայությունից հետո Վրաստանը ձեռք է բերել աշխարհում յոթերորդ բարձրագույն իրավասությունը բիզնես վարելու դյուրինությամբ: Երկրի ուժեղ կողմերը օտարերկրյա քաղաքացիների համար բիզնես սկսելու և աճող շինարարական շուկա մուտքի դյուրինությունն է: Համաշխարհային բանկը նաև նշում է, որ Վրաստանը «մինորիտար ներդրողներին պաշտպանելու» լավ փորձ ունի:

Թաիլանդը դեռևս 2010-ականների կեսերին դասվում էր լավագույն 50 երկրների շարքում՝ բիզնես վարելու դյուրինությամբ, սակայն մինչև 2020 թվականը Թաիլանդը զբաղեցրեց լավագույն 20-յակը: Մի դիրք, որը արևադարձային ասիական երկիրը շարունակում է պահպանել այսօր: 2023 թվականի դրությամբ Թաիլանդը համարվում է շատ բիզնես-բարեկամական տարածք: Համաշխարհային բանկի ռեյտինգի համաձայն՝ Թաիլանդը, բավականին լավ աշխատանք է կատարում «մինորիտար ներդրողներին պաշտպանելու» ուղղությամբ և դասվում է աշխարհի 10 լավագույն երկրների շարքում:

Մոնտենեգրո կարճ ժամանակահատվածում Չեռնոգորիան դարձել է բիզնեսի համար բարենպաստ միջավայր, գուցե նույնիսկ լավագույնը Բալկաններում: Միացյալ Նահանգների հետ պարզեցված տնտեսական ուղիների ստեղծումից հետո Չեռնոգորիան ապրեց «տնտեսական ակտիվության վերականգնում», որն «ավելացրեց կառավարության եկամուտները և ստեղծեց բարենպաստ բիզնես միջավայր ներքին և օտարերկրյա ներդրումների համար», նշում է Modern Diplomacy-ն 2023 թվականին: Չեռնոգորիայի ուժեղ կողմերից մեկը նոր բիզնեսի համար վարկ ստանալու դյուրինությունն է բալկանների և Արևելյան Եվրոպայի այլ երկրների հետ համեմատած:

Մարոկկո որպես Աֆրիկայում բիզնեսի համար առավել բարենպաստ իրավասություն՝ Մարոկկոն ունի բազմաթիվ արտաքին առևտրի համաձայնագրեր (ԱԱԳ) այլ արաբական երկրների, ԵՄ-ի (ստորագրված 1996-ին) և ԱՄՆ-ի (ստորագրված 2004-ին) հետ, որոնք խրախուսում են օտարերկրյա բիզնեսներին հյուսիսաֆրիկյան այս երկրում գործունեություն իրականացնելու համար: Զարմանալի չէ, որ այս քանակի արտաքին առևտրի համաձայնագրերով Մարոկկոյում

«միջազգային առևտուրը» Համաշխարհային բանկի կողմից դասում է որպես բիզնես վարելու առավելություններից մեկը: Բիզնես վարելու դյուրինության առումով երկրի լավ գնահատականը պայմանավորված է նաև խելամիտ հարկման համակարգով և թույլտվությունների պարզեցված գործընթացով:

Օմանը գտնվելով Արևմտյան Ասիայի խոշորագույն բիզնես կենտրոններին մոտ՝ Օմանը նաև լավ դիրք ունի բիզնես գործունեության կենտրոն դառնալու համար: Երկրի օրինակելի դիվանագիտությունը և երկարամյա քաղաքական կայունությունը Օմանը դարձնում են միջազգային ներդրումների հուսալի վայր: Երկրի ուժեղ կողմերը ներառում են նրա ճկուն հարկային համակարգը, որը բավականին ակնհայտ է Պարսից ծոցի երկրների տնտեսությունների համար, միջազգային առևտրի դյուրինությունը: Վերջինս հնարավոր է դարձել ինչպես աջակցող կարգավորիչ շրջանակի, այնպես էլ տրանսպորտային մեգանախագծերի, ինչպիսին է Դուքմը:

Այն փաստը, որ Վրաստանը, Թաիլանդը, Մոնտենեգրոն, Մարոկկոն և Օմանը բիզնես վարելու դյուրինության առումով բարձր տեղ են զբաղեցնում, անշուշտ լավ է ոչ միայն նրանց բիզնես հատվածների, այլև ընդհանուր առմամբ նրանց տնտեսությունների համար:

Բիզնես վարելու հեշտությունը ազդում է այլ մակրոտնտեսական փոփոխականների վրա, ինչպիսիք են օտարերկրյա ուղղակի ներդրումները (ՕՈՒՆ):

Զարմանալի չէ, որ կապիտալն ավելի հավանական է, որ կհոսի դեպի այն շուկաներ, որտեղ բիզնեսի համար ավելի քիչ խոչընդոտներ կան, և մենք, ամենայն հավանականությամբ, 2023-2024 թվականներին կտեսնենք կապիտալի ներհոսք վերը նշված երկրներ:

Ինչ վերաբերվում է Հայաստանի Հանրապետության, այստեղ գործարար միջավայրի բարելավման նպատակով կառավարությունը 2022 թվականի հունվարի 1-ից օրենսդրական փոփոխություններ մտցրեց «Բաժնետիրական ընկերության մասին» ՀՀ օրենքում, որով ներդրվեցին փոքր բաժնետերերի շահերի պաշտպանության հավելյալ մեխանիզմներ: Օրենքում կատարվել են հետևյալ փոփոխությունները[1].

1. Հստակեցվել է շահագրգռվածություն ունեցող բաժնետիրոջ ներգրավվածության աստիճանը նման որոշումների ընդունման գործընթացում,
2. գործարքով վճարման ենթակա գումարը կամ գործարքի առարկա հանդիսացող գույքի հաշվարկված շուկայական արժեքը հավասար է ընկերության ակտիվների արժեքի առնվազն 10 տոկոսին,
3. գործարքը կամ մի շարք փոխկապակցված գործարքներ կնքվում են ընկերության քվեարկող բաժնետոմսերի կամ քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող ընկերության այլ արժեթղթերի տեղաբաշխման նպատակով, և որոնց քանակն

[1] ՀՀ կառավարության որոշում N 1487-Ա առ 16,09,2021թ. , https://e-gov.am/gov-decrees/item/36884/, (վերջին մուտք՝ 14.02.2024թ.)

ավելի է ընկերության արդեն տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի քանակի 2 տոկոսից,

4. Շահագրգռվածություն ունեցող բաժնետերն իրավունք չունի ներկա լինելու գործարքը կնքելու մասին որոշման քննարկմանը կամ քվեարկությանը, իսկ նրան պատկանող բաժնետոմսերը հաշվի չեն առնվում ժողովի քվորումի հաշվարկման ժամանակ: Այս դեպքում գործարքը կնքելու մասին որոշումն ընդունվում է միայն քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր և գործարքի կատարման մեջ շահագրգռվածություն չունեցող բաժնետերերի ձայների մեծամասնությամբ[1]:

Այս փոփոխությունները կարող են ապահովել փոքր բաժնետերերի շահերի պաշտպանությունը և դրա արդյունքում՝ Համաշխարհային բանկի «Գործարարություն» զեկույցի «փոքր բաժնետերերի շահերի պաշտպանություն» ցուցչի մասով կարձանագրեն Հայաստանի դիրքի առաջընթաց և շարունակականությունն ապահովելու նպատակ: Նախագիծն ընդունվել է ՀԲ գնահատող թիմի կողմից որպես բարեփոխում, որի արդյունքում Առաջին բաղադրիչի «տեղեկատվության բացահայտում» ենթացուցչի մասով Հայաստանը կունենա 9 միավոր ներկայիս 7-ի փոխարեն, երկրորդ բաղադրիչի «կորպորատիվ թափանցիկություն» ենթացուցչի մասով՝ 6 միավոր ներկայիս 5-ի փոխարեն: Արդյունքում «Գործարարություն 2022» զեկույցում «Փոքր բաժնետերերի պաշտպանություն» ցուցչի ընդհանուր միավորների և «Փոքր բաժնետերերի պաշտպանություն» ցուցչի հեռավորությունը լավագույն արդյունքից ցուցանիշները առաջընթաց կունենան:

Այսպիսով, ՀՀ գործարար միջավայրի բարելավման գործում տնտեսության ոլորտներում իրականացվող տնտեսական մեխանիզմները կարևոր դերակատարություն ունեն: ՀՀ գործարար միջավայրի զարգացման համար բիզնեսի մուտքը պետք է անխոչընդոտ լինի հատկապես գրանցվելու և աշխատողներ ընդունելու առումով: Մի շարք ընթացակարգերի պարզեցմամբ ու վարչարարական ռիսկերի վերացմամբ հնարավոր է իրականացնել ինստիտուցիոնալ բարեփոխումներ, այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ շինարարության թույլտվությունը, էլեկտրաէներգիայի կայանների միացումը, սեփականության գրանցումը և այլն: Գրեթե բոլոր երկրներում բավականին խնդրահարույց են այնպիսի գործարքները, ինչպիսիք են հարկերի վճարումը, ֆինանսավորման ստացումը, պայմանագրերի կիրառումը, անվճարունակության, սնանկության ճանաչման խնդիրները, միջսահմանային առևտուրը և այլ նմանատիպ խնդիրներ:

Համաշխարհային տնտեսությունում երկրների զարգացման միտումները դիտարկելով, կարող ենք ասել, որ Հայաստանի բարենպաստ դիրքի ապահովման համար անհրաժեշտ է երկրի տնտեսության մրցունակության բարձրացումը՝ նորարարությունների ներդրմամբ և կատարելագործմամբ: Ներդրումների ծավալների աճը կնպաստի ՀՀ համաշխարհային մրցունակության դիրքերի բարձրաց-

[1] Տե՛ս նույն տեղում:

մանը և ՀՀ գործարար միջավայրի միջազգայնացմանը: Անհրաժեշտ է տնտեսության բոլոր մասնակիցների համար ապահովել հավասար պայմաններ, ձևավորել արդյունավետ շուկա և զարգացնել մրցունակ բիզնես:

Հիմք ընդունելով գործարար միջավայրի զարգացման միտումները աշխարհում և դիտարկելով Հայաստանն այդ համատեքստում, հաշվի առնելով ՀՀ օրենսդրական դաշտի փոփոխությունները՝ առաջարկում ենք գործարարների իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով, ստեղծել տեղեկատվական թվայնացված պետական միասնական կենտրոն, որը տեղեկատվություն կտրամադրի գործարարներին և այլ շահագրգիռ անձանց երկրի գերակա ճյուղերի, դրանցում առկա արտոնությունների, գործող գործարար սուբյեկտների թվաքանակի և այլնի վերաբերյալ: Նմանատիպ մասնագիտացված կենտրոնի առկայությունը, միաժամանակ, կբարձրացնի նաև գործարարների իրազեկվածությունը, քանի որ ներկայիս գործարարների մեծ մասն անտեղյակ է կատարվելիք օրենսդրական փոփոխություններից, անգամ որոշ արտոնություններից:

Գիտական նորույթ: Իրականացված հետազոտությունը փաստում է այն մասին, որ հաշվի առնելով գործարար միջավայրի զարգացման միտումները աշխարհում և դիտարկելով ՀՀ–ն այդ համատեքստում, նկատելի է ՀՀ–ում գործարարների իրազեկվածության բացակայությունը կապված որոշ ոլորտների գործունեության թափանցիկության հետ, որի համար առաջարկվել է ներդնել պետական միասնական թվայնացման կենտրոն իր էլեկտրոնային հարթակով, որը կներառի տնտեսական գործիքակազմի բարելավման և կառուցվածքային մեխանիզմների վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը՝ ապահովելով գործարարների համար իրազեկվածության և տեղեկատվության հասանելիությունը:

Եզրակացություն: Ուսումնասիրելով գործարար միջավայրի զարգացման միտումները աշխարհում և դիտարկելով ՀՀ գործարար միջավայրի դյուրինությանը խոչընդոտող հիմնախնդիրները այդ համատեքստում, կատարել ենք եզրահանգումներ և առաջարկություններ.

- Հայաստանը ԵԱՏՄ երկրների շարքում տնտեսական ազատության ինդեքսով առաջատարն է իր դիրքով և միավորով,
- Հայաստանի գործարարությամբ զբաղվելու դյուրինության ինդեքսի առավել շահեկան դիրքի ապահովումը ոչ պակաս կարևոր է: Հատկապես տեսանելի են հարկերի վճարման, միջսահմանային առևտրի, վարկերի ստացման, պայմանագրերի կիրարկման հետ կապված խնդիրները, որոնք պայմանավորված են նաև եկամուտների անհավասարաչափ բաշխմամբ , հարկային վարչարարությամբ ու քաղաքական դիրքորոշմամբ:
- Գործարար միջավայրի ճիշտ գնահատման և արդյունավետության բարձրացման նպատակով շատ կարևոր է գործարարների իրազեկության մակարդակի բարձրացումը: Այդ նպատակով առաջարկվում է ստեղծել պետական աջակցությամբ գործող մեկ միասնական կենտրոն:

Օգտագործած գրականության ցանկ

1. Դավոյան Ս., Մարկոսյան Ա., Սարգսյան Հ., «Վերափոխումներն անցումային երկրների տնտեսություններում»: Երևան, «Տիգրան Մեծ» 2003:
2. Մանասյան Ա., ՀՀ գործարար միջավայրի մրցակցային ռազմավարության նոր մոդել, http://arar.sci.am/Content/39135
3. Մարկոսյան Ա., «Պետությունը և շուկան», Երևան, «Տիգրան Մեծ», 2000, 560 էջ:
4. Քալանթարյան Պ., «Գործարարության գործավարություն, Երևան «Տնտեսագետ» 2005.
5. Dollar D., Hallwart-Driemier M., Mengistae T., « Investement Climate and Firms Performance in the Developmenet Economies». World Bank, 2003 pp. 118-120.
6. Phil Kelly and Andrew Ashwin «The Business Environment», 2013, pp. 78-81
7. Michael E. Porter. «The Five Competitive Forces that Shape Strategy», Harvard Business Review, January, 2008, p.86.
8. IMD (2023), IMD World Competitiveness Booklet, Lausanne, Switzerland: IMD, retrieved from: https://imd.cld.bz/IMD-World-Competitiveness-Booklet-2023. Date of access February 14, 2024.
9. IMD, World Competitiveness Ranking 2023 - IMD Business School https://www.imd.org/centers/wcc/world-competitiveness-center/rankings/world-competitiveness-ranking/
10. Լույս հիմնադրամ, Հաշվետվություն «Հերիթեյջ» հիմնադրամի կողմից հրապարակված զեկույցի,(2023թ.) հիման վրա, https://www.luys.am/img/artpic/small/08f109c250865259fd1104_%D5%8F%D4%B1%D4%BB-2023.pdf,
11. Լույս հիմնադրամ, Հաշվետվություն, Տնտեսական Ազատության Ինդեքս «Հերիթեյջ» հիմնադրամի կողմից հրապարակված՝ 2020թ. զեկույցի հիման վրա: https://www.luys.am/img/artpic/small/4731163877d98bf58d05%D5%8F%D5%86%D5%8F%D4%B5%D5%8D%D4%B1%D4%BF%D4%B1%D5%86%D4%B1%D4%B6%D4%B1%D5%8F%D5%88%D5%92%D4%B9%D5%85%D4%B1%D5%86%D4%BB%D5%86%D4%B4%D4%B5%D5%94%D5%8D.pdf
12. Թրանսպարենսի ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն, (2023թ.), Կոռուպցիայի ընկալման համաթիվ (ԿԸՀ), https://transparency.am/hy/cpi
13. The World Bank, OCTOBER 5, 2021 a strong recovery is boosting the emerging economies of Europe and Central Asia, https://www.worldbank.org/hy/news/press-release/2021/10/05/strong-rebound-in-2021-boosts-economies-in-emerging-europe-and-central-asia-slowdown-ahead-in-2022
14. EU NEIGHBOURSEAST :(October 21, 2022) ,The EU has published EU4Business 2022. annual report on SME support in Eastern Partnership countries, , retrieved from: https://euneighbourseast.eu/hy/news/latest-news/em-n-hraparakel-e-eu4business%D6%8Ai-2022t-tarekan-zekuycy-arewelyan-gorcynkerutyan-erkrnerum-pmj-ajakcutyan-masin/
15. ՀՀ կառավարության որոշում N 1487-Ա առ 16,09,2021թ. , https://e-gov.am/gov-decrees/item/36884/ , (վերջին մուտք՝ 14.02.2024թ.)

16. The World Bank .(2020). Doing Business 2020. Comparing Business Regulation in 190 Economies:Washington, DC: The World Bank Group https://documents1.worldbank.org/curated/en/688761571934946384/pdf/Doing-Business-2020-Comparing-Business-Regulation-in-190-Economies.pdf

ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Վարդուհի Արեգի Խաչատուրյան
Էլինա Սերգեի Շամխալովա

Համառոտագիր: Բարենպաստ գործարար միջավայրի առկայությունն արդեն իսկ տնտեսության ամենակարևոր շարժիչ ուժերից մեկն է: Ընդհանուր առմամբ, երկրի գործարար միջավայրը կախված է արտաքին ու ներքին միջավայրերի գործոններից, որի ազդեցությամբ գործում է բիզնեսը: ՀՀ-ում գործարար միջավայրի կայունությունը, զարգացման մակարդակը, դրանում առկա հնարավորությունները և խոչընդոտները ուղղակի ու անուղղակի կերպով պայմանավորում են գործարարության ակտիվության և դյուրինության հնարավոր մակարդակը:

Ինչպես և մի շարք երկրներում ՀՀ տնտեսական և սոցիալական կայունության հիմնական երաշխիքը հանդիսանում է գործարար միջավայրը, որի զարգացումը հնարավորություն է ընձեռում մեղմելու տնտեսական և սոցիալական դժվարությունները, հետևաբար՝ գործարար միջավայրի զարգացումն ազդում է մեր երկրի կյանքի որակի բարձրացման վրա: Այս և նմանատիպ հիմնախնդիրների լուծումները **արդիական են դարձնում հետազոտության** թեման:

Նպատակը: Հոդվածի **նպատակն** է ուսումնասիրել գործարար միջավայրի զարգացման միտումները աշխարհում, ՀՀ-ն այդ համատեքստում: Նպատակն իրականացնելու համար խնդիր է առաջադրվել.

- բացահայտել գործարար միջավայրի զարգացման միտումները աշխարհում, ՀՀ-ն այդ համատեքստում:

Մեթոդաբանությունը: Հոդվածի համար տեսական և մեթոդական հիմք են հանդիսացել արտասահմանյան և հայ տնտեսագետների աշխատությունները, Համաշխարհային բանկի, միջազգային արժույթի հիմնադրամի, BERI միջազգային կազմակերպության, ՏՀԶԿ-ի կողմից հրապարակված զեկույցներն ու պաշտոնական վիճակագրությունը,և այլ զեկույցներ:

Գիտական նորույթը: Իրականացված հետազոտությունը փաստում է այն մասին, որ հաշվի առնելով գործարար միջավայրի զարգացման միտումները աշխարհում և դիտարկելով ՀՀ–ն այդ համատեքստում, նկատելի է ՀՀ–ում գործարարների իրազեկվածության բացակայությունը կապված որոշ ոլորտների գործունեության թափանցիկության հետ, որի համար առաջարկվել է ներդնել

պետական միասնական թվայնացման կենտրոն իր էլեկտրոնային հարթակով, որը կներառի տնտեսական գործիքակազմի բարելավման և կառուցվածքային մեխանիզմների վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը՝ ապահովելով գործարարների համար իրազեկվածության և տեղեկատվության հասանելիությունը:

Բանալի բառեր. գործարար միջավայր, կոռուպցիայի ընկալում, տնտեսական ազատություն, համաշխարհային մրցունակության համաթիվ, գործարար միջավայրի դյուրինություն:

ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ БИЗНЕС-СРЕДЫ В РА: СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ

Вардуи Ареговна Хачатурян
Элина Сергеевна Шамхалова

Аннотация: Наличие благоприятной бизнес-среды уже является одной из важнейших движущих сил экономики. В целом бизнес-среда страны зависит от факторов внешней и внутренней среды, под влиянием которых функционирует бизнес. Стабильность, уровень развития бизнес-среды в Армении, существующие в ней возможности и препятствия прямо и косвенно обуславливают возможный уровень активности и легкости ведения бизнеса.

Как и в ряде стран, основной гарантией экономической и социальной стабильности Армении является бизнес-среда, развитие которой дает возможность смягчить экономические и социальные трудности, следовательно, развитие бизнес-среды влияет на повышение качества жизни в нашей стране. Решения этих и похожих проблем и делают тему исследования **актуальной**.

Целью статьи является изучение развития бизнес-среды в мире и Армении в этом контексте. Для достижения цели были поставлены следующие **задачи**:

- выявить тенденции развития бизнес-среды в мире и Армении в этом контексте,

Методология: Теоретической и методологической основой для статьи послужили труды зарубежных и армянских ученых и исследователей, отчеты и официальная статистика, опубликованные Всемирным банком, Международным валютным фондом, международной организацией биржи, BERI и другие отчеты.

Научная новизна: Проведенное исследование свидетельствует о том, что, учитывая тенденции развития бизнес-среды в мире и рассматривая Армению в этом контексте, заметно отсутствие осведомленности предпринимателей в Армении, связанное с прозрачностью деятельности в некоторых сферах, для чего было предложено внедрить единый государственный центр оцифровки с собственной электронной платформой, который будет включать всю информацию об улучшении экономического инструментария и структурных механизмах, обеспечивая предпринимателям осведомленность и доступ к информации:

Ключевые слова: бизнес-среда, восприятие коррупции, экономическая свобода, глобальный индекс конкурентоспособности, легкость ведения бизнеса.

DEVELOPMENT TRENDS OF BUSINESS ENVIRONMENT IN RA: COMPARATIVE ANALYSIS

Varduhi Areg Khachaturyan
Elina Sergey Shamkhalova

Abstract: The presence of a favorable business environment is one of the most important driving forces of the economy. In general, the business environment of a country depends on the factors of the external and internal factors under the influence of which the business operates. Stability, the level of development of the business environment in Armenia, and the existing opportunities and obstacles directly and indirectly determine the possibilities and ease of doing business.

As in many countries, the main guarantee of Armenia's economic and social stability is the business environment, the development of which enables it to mitigate economic and social difficulties, therefore, the development of the business environment brings to the improvement of the quality of life in Armenia.

Purpose: the purpose of the article is to study the trends in the development of the business environment in the world and Armenia. In the scope of that purpose the following tasks were set:

- to identify trends in the development of the business environment in the world and Armenia,
- analyze the trends of the business environment development.

Methodology: The theoretical and methodological basis for the article was the works of foreign and Armenian scientists, researchers, reports, and official statistics published by the World Bank, the International Monetary Fund, the International Organization of the Stock Exchange, the BERI, etc.

Scientific novelty: research findings indicate that, given the trends in the development of the business environment in the world and Armenia, there is a noticeable lack of awareness of entrepreneurs in Armenia related to transparency of activities in some areas, for which it was proposed to introduce a unified state digitization center with an electronic platform that will include all information on improving economic tools and structural mechanisms, providing entrepreneurs with awareness and information access.

Keywords: business environment, perception of corruption, economic freedom, global competitiveness index, ease of doing business.